

համար, հայու տունէն կ'անցնի քիւրդի, ու քիւրդի տունէն հայու տունը, կը մտնէ շատ զգուշ իրրև գալլ, ու դուրս կկլլէ շատ անմեղ իրրև գառն :

Բայց ի՞նչ կ'արժեն իր նժոյգը, իր ոսկեթել բանուածներէ բաճկոնակը, արուանան, իր արդուզարդը, որոնք ձեռք բերելու համար էլեաթի շատ քաջերու արիւնն է թափուեր. ի՞նչի կը ծառայէ թանկագին հազուագիւտ զէնքը որ չէ կարող զինք իր նպատակին հասցնել : Այս պարագաներուն՝ ցեղապետական յարգանքը, քաջութիւնը, փառքը, ցեղի առաջդիմութեան գաղափարականը կամ անկուծի երկիւղը կը հեռանան իր աչքի առջևէն, չէ՞ որ քիւրդի սկզբունքն է զէնք, ձի ու կին. սկզբունք մը որ անցեր է պաշտամունքի սեղ, որու հետ խառն է և անկախութեան վայելքը : Եթէ ձին ու զէնքն ունի, անոր համար է, որ կ'ինն ալ ունենայ. ևթէ կ'ինը չը կայ, ալ ի՞նչ քրդական սկզբունք. ի՞նչ ձի, ի՞նչ զէնք, և ի՞նչ անկախութիւն. ցանկական կատաղի կ'իրքը կը զարթնէ . . . և ցեղի որդիները կը հրաւիրուին թալանի, առևանդութեան, և կոտորածի ասպարէզը, ու հասարակական տրամը կը սխի :

ԱՇԻՐԱԹՈՒԹԻՒՆ ԻՐՐՔՈՒՄԻ ԿԻՍԱ-ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶԵԻ

Աշիրաթութիւնը դաշնակցած էլեաթներու կառավարութիւն մ'է Քիւրդերու մէջ. էլեաթը փոքր փոքր չըջաններով, ու իր սահմաններուն մէջ կ'ապրի իր նահապետական կեանքով, իր առանձին սովորութիւններով, էլ-ազասիի անմիջական կառավարութեան տակ :

Տնտեսութիւնը, հողային մշակութիւնը, անասնաբուծութեան համար արօտավայրերու բաժանուծը, ծագած վէճերու առթիւ դատավարութիւնը, ուրիշ կենսական խնդիրներն ևս, ինչպէս ամուսնութիւնը, ազգակցական, բարեկամական և